

գրուեցան առ ամենայն նախարարս հայոց, որ դան ժողովուրին Դուին խորհիլ ազդիւն կանոն մը դնելու: Այսպիսի յարմար ժամանակ քիչ կը հանդիպէր, հայոց նախարարաց մեծ մասը արդէն համոզուած էին, թէ բան մը պետք էր ընել, ուստի յօժար էին միաբանելու. իսկ Ներսէս կաթողիկոս ոչ միայն քաղաքագետ մարդ էր, այլեւ ուսմունք սովորած, Յունաց կայսրութեան մեծ մասը պտրտածդ ամեն բանի տեղեակ, արդէն դաշնագրին գլխաւոր կետերը Թեոդորոսի հետ գրի առած էին, եւ Ասպետը, որ Թեոդորոսի ուղղութեան վրայ կատարեալ վստահութիւն ուներ՝ առանց երկմտութեան ընդունեց իրենց պայմանները: Հակասութիւն երկու նախարարութեանց կողմանէ միայն կարելի էր. Մամիկոնեանց եւ Մոկաց:

Դաշնագրին պայմանները պարզ էին, նպատակը անիշխանութեան տարտամ վիճակէն հանել էր Հայաստան եւ կեդրոնական կառավարութիւն մը հաստատել, որ թէ օտարէն յարձակմանց եւ թէ ներքին հարստահարութեանց կարենար ընդդիմանալ եւ ժողովուրդը անտանելի յարկաց ծանրութենէ եւ երկիրն աւերմունքէ կարենար պաշտպանել:

Արդէն կայսեր կողմանէ կիրաւապաղատ եւ զօրավար անուանեալ անձինք որոշուած էին, ուրեմն դատաստանական բարձր ատեան մը եթէ հաստատուէր, մեծ նախարարաց նվիրակներէ կազմեալ, որուն վճիռներուն ամեն ոք պարտաւորուէր հնազանդիլ, եթէ ժողովք մը նաեւ կազմուէր որոշելու համար յարկաց արդար բաշխումը, եւ կանոնաւորեալ զինուորութիւն մը ըստ մարդաթուոյ, Հայաստան ապահովեալ կը համարուէր:

– Եւ մինչեւ այս մեծ գործը կատարելու վրայ էր, ահա յանկարծ Վարազտիրոց քանի մը օրուան մէջ կարճ հիւանդութեամբ մեռաւ Դուին, եւ միաբանութիւնն վտանգեցաւ: Վասնզի թեպէտ կայսրը, նորա որդին Սմբատ հօր տեղ կիրաւապաղատ անուանեց, բայց հօր ազդեցութիւնն ունենալէ շատ հեռու էր: